ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է բժշկական ծառայությունների տրամադրման ժամանակ բժշկական գաղտնիքի պահպանման, մարդու իրավունքների խախտումների հետ կապված խնդիրների բացառման անհրաժեշտությունից: Ներկայումս հիվանդանոցների մանիպուլյացիոն և հետազոտություններ անցկացնելու համար նախատեսված սենյակներում /տարածքներում/ տեղադրված են տեսալուսանկարահանող սարքեր: Այդ սարքերի տեղադրումը օրենքով արգելված չէ, սակայն այն առաջացնում է մարդու իրավունքների խախտումների հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների պահպանմանը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի տեսանկյունից, իր նախադեպային որոշումներով արձանագրել է հետևյալը. «Անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության պահպանումը Կոնվենցիայի բոլոր պայմանավորվող կողմերի իրավական համակարգերի առանցքային սկզբունք է: Այն խիստ կարևոր է ոչ միայն պացիենտների անձնական կյանքը հարգելու, այլև առհասարակ բժշկի մասնագիտության և առողջապահական ծառայությունների նկատմամբ նրանց վստահությունը պահպանելու համար: Առանց նման պաշտպանության, բժշկական օգնության կարիք ունեցող անձինք կարող են մտավախություններ ունենալ պատշաճ բուժման նշանակման համար անհրաժեշտ անձնական և ինտիմ բնույթի տեղեկություններ ներկայացնելու և նույնիսկ բժշկին դիմելու հարցում: Այդկերպ նրանք կարող են վտանգել սեփական, իսկ վարակիչ հիվանդությունների դեպքում՝ նույնիսկ հանրային առողջությունը: Հետևաբար, ներպետական օրենսդրությամբ պետք է պատշաճ երաշխիքներ սահմանվեն, որպեսզի կանխվի առողջությանը վերաբերող անձնական տվյալների ցանկացած այնպիսի փոխանցում կամ բացահայտում, որը կարող է հակասել 8-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներին[1]»:

Պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տարածքի տեսալուսանկարահումը ինքնին չի հանդիսանում Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ անձի տեսալուսանկարահանմամբ սահմանափակվում է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ անհրաժեշտ է պարզել թե արդյոք սահմանափակումները «օրենքի համաձայն են» կամ «նախատեսված են

[1] https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_8_HYE.pdf

օրենքով» և «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում» Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նպատակներին հասնելու համար:

Այս առումով անհրաժեշտ է նկատել, որ ներկայումս առկա կարգավորումները հնարավորություն չեն տալիս լիարժեք գնահատել պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տեսալուսանկարահանմամբ անձի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմափակման իրավաչափությունը, ինչը հնարավոր կլինի միայն սահմանված համապատասխան կարգի առկայության պարագայում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով մարդու իրավունքներին միջամտության բարձր աստիճանը՝ առաջարկում ենք օրենքով ամրագրել որոշ նվազագույն երաշխիքներ:

Այսպես, օրինակ՝ Լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով հստակեցնել, թե հիվանդանոցի որ տարածքների տեսալուսանկարահանման մասին է խոսքը գնում, քանի որ պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տարբեր տարածքները պաշտպանության տարբեր աստիճան են ենթադրում, օրինակ՝ հիվանդանոցի հանրային տարածքներում անձը կարող է ունենալ տեսալուսանկարահանվելու ողջամիտ ակնկալիք, սակայն ավելի մասնավոր տարածքներում ինչպիսիք են օրինակ՝ մանիպուլյացիոն կամ հետազոտությունների համար նախատեսված սենյակներում կամ տարածքներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում, անձն ունի իր մասնավոր կյանքի գաղտնիության ապահովման երաշխիքի ողջամիտ ակնկալիք: Հաշվի առնելով վերոգրյալը՝ այսպիսի տարածքներում տեսալուսանկարահանումը կարող է հանգեցնել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումներով՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին համապատասխանության ապահովման նպատակով, առաջարկում ենք օրենքով նախատեսել պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից տեսալուսանկարահանման նվազագույն երաշխիքներ և պայմաններ:

Արգելելով տեսալուսանկարահանող սարքերի օգտագործումը չափումների և միջամտությունների (մանիպուլյացիոն) սենյակներում, հիվանդասենյակներում, լոգարաններում, սանհանգույցներում, հարկ ենք համարում նաև վարչական տուգանքի սահմանումը այդ տարածքներում տեսալուսանկարահանող սարքերի օգտագործման դեպքերի համար:

2. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից: